ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՆԻ ՄԻՋՆ. ԴՊՐՈՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

2022-2023 ՈՒՍՏԱՐԻ



Ս. ՀԱԿՈԲՅԱՆ

Դաստիարակությունը պետության կրթական քաղաքականության և կրթության համակարգի կարևորագույն ռազմավարական խնդիրն է, քանզի կրթության գերնպատակը անձի կայացումն է: Միևնույն ժամանակ դաստիրակությունը պետության պարտավորությունն էիր քաղաքացիների առջև՝ ապահովելու անձի լիարժեք զարգացումն ու ինքնադրսևորումը:

Դաստիարակության նպատակն է՝ ապագա քաղաքացու ինքնաճանաչման, նրա անձի և անհատականության լիարժեք դրսևորման և զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը, ազատ և համակողմանի զարգացած, ազգային արժանապատվությամբ և քաղաքացիական գիտակցությամբ օժտված անձի ձևավորումը:
դաստիարակությունը դպրոցում պատշաճ կազմակերպելու նպատակով անցկացնել հետևյալ միջոցառումները

2022-2023ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքները ուղղված են՝

1. Կրթության հիմքի վրա ձևավորված մտավոր, հոգևոր և ֆիզիկական կարողությունների հետագա զարգացման ապահովմանը:

2. Դրական վարքի ու բարեկիրթ վարվեցողության, կայուն և զարգացած արժեքային համակարգի ձևավորմանը:

3. Բարոյահոգեբանական, հայրենասիրական, գեղագիտական, էկոլոգիական և ֆիզիկական դաստիարակության և առողջ ապրելակերպի հիմքի ամրապնդմանը:

4. Հայրենիքի պաշտպանությանը իր մասնակցությունն ունենալու պատրաստակամության և հետագայում զինծառայության անցնելու կարևորության գիտակցման ձևավորմանը:

Կազմակերպել և իրականացնել ուսումնական հաստատությունում կրթության կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելուն ուղղված միջոցառումներ:

1.Սահմանել վերահսկողություն պարբերաբար ուշացումների և անհարգելի բացակյությունների նկատմամբ: Սկսած՝05 .09 .
2.Մշտադիտարկման արդյունքում /դասալսումներ, դասամիջոցներին հերթապահություն/ փորձել եմ պարզել վատ վարքագիծ ցուցաբերող աշակերտներին /պարբերաբար/
3.Վարքի շեղումները կանխարգելելու նպատակով պարբերաբար դժվար դաստիարակվող աշակերտների հետ: Սկսած՝12.09
4. Աշակերտ- դպրոց- ընտանիք կապը ամուր հիմքերի վրա դնելու նպատակով անընդմեջ հետևել աշակերտների վարքին , զրուցել աշակերտների հետ, անհրաժեշտության դեպքում նաև ծնողների հետ :
7.Միջոցներեն ձեռնարկվել սոցիալապես անապահով երեխաներինօգնությունցույցտալուհամար:
8.Բացակայությունները նվազագույնին հասցնելու նպատակով կատարել ամենօրյա բացակայությունների հաշվառում , ամեն օրծնողին տեղյակ պահել երեխայի բացակայության մասին: Անհրաժեշտության դեպքում ծնողին հրավիրել դպրոց:
9.Սահմանել աշակերտականհերթապահություն Ա/խ-ի անմիջական մասնակցությամբ: /03.10/

Դպրոցում աշակերտական ինքնավարության համակարգի զարգացման համար անհրաժեշտ է՝

ստեղծել մանկավարժական, աշակերտական և ծնողական ինքնավարության օղակներ

դպրոցում մշտապես վերահսկել աշակերտական ինքնավարության բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքները

ծնողների և երեխաների համատեղ մասնակցությամբ պարբերաբար անցկացնել միջոցառումներ

ոգևորելև խրախուսել դպրոցի կյանքին ակտիվ մասնակցություն ցուցաբերած ծնողների անհատական նախաձեռնությունները ,

դպրոցի ծնողական խորհրդում ներգրավել դպրոցի ամենաակտիվ և փորձառու ծնողներին

ամրապնդել ծնողական խորհրդի կապը աշակերտական, մանկավարժական և կառավարման խորհուրդների հետ:

դպրոցի ինքնավարության օղակների միջև կատարել լիազորությունների հստակ բաշխում և ապահովել վերջիններիս միջև սերտ համագործակցությունը

այս ուղղությամբ ևս ապահովել սկզբունքների հրապարակայնություն և թափանցիկություն

ստեղծել բավարար պայմաններ և հնարավորություն ընձեռել դպրոցի աշակերտների կողմից առողջ քննադատություն հնչեցնելու և կարծիքների ազատ փոխանակում իրականացնելու համար

Աշակերտներին ակտիվորեն ներգրավել

Դպրոցում կարգուկանոնի պահպանման գործընթացում դպրոցական և ռազմահայրենասիրական միջոցառուների կազմակերպմանը, առարկայական շաբաթների կազմակերպմանը:

Դպրոցում պարբերաբար կազմակերպել՝

արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներ (տոնականմիջոցառուներ, ցերեկույթներ, էքսկուրսիաներ և այլն)

դպրոցական հերթապահություններ

ճանաչված անձանց հետ հանդիպումներ

դպրոցում մշտապես օգնություն, խնամք և աջակցություն տրամադրել կրտսեր

ընկերներին բարեխիղճ և համարժեք կերպով արձագանքել շրջապատում տեղի

ունեցող երևույթներին,

Նպատակաուղղել երեխայի արժեքային համակարգի ձևավորումը,

զարգացնել սովորողների ճանաչողական ակտիվությունը,

Աշակերտի մոտ ձևավորել հարգալից վերաբերմունք լեզվի, մշակույթի և ազգային

ավանդույթների նկատմամբ՝ դարձնելով նրան այդ արժեքների կայուն կրողը,

Յուրաքանչյուր անհատի մոտ ստեղծել ինքնակատարելագործման ներքին պահանջ

Վերոհիշյալ խնդիրները նպատակ են հետապնդում դպրոցում ստեղծել հնարավորինս միասնական դաստիարակչական միջավայր, որը ներառում է

Դպրոցի անձնակազմը

Դասարանական անձնակազմը

Աշակերտների ինքնավարությունը

Դպրոցի ավանդույթները

ՀԻՄՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ
2022-2023ՈՒՍՏԱՐԻ

N	Աշխատանքի բովանդակությունը	ժամկետը	Կատարող անձ
1	Ստուգել աշակերտների հաճախելիությունը, նշել բացակայությունները:	Տարվա ընթացքում	ՄԿԱ ԴԱԿ
2	Ստուգել պայուսակների, օրագրերի, դասագրքերի առկայությունը	Տարվա ընթացքում	ՄԿԱ ԴԱԿ
3.	Հետևել աշակերտների սանրվածքներին,հագուստներին, աշակերտին վայել ձևով դպրոց հաճախելուն	Տարվա ընթացքում	ՄԿԱ ԴԱԿ Բուժքույր
4.	Հետևել աշակերտական հերթապահությանը դպրոցում, ճաշարանում	Տարվա ընթացքում	ՄԿԱ ԴԱԿ
5.	Կազմակերպել շաբաթօրյակներ, բարեկարգման աշխատանքներ	ուշգարնանը վաղաշնանը	ՄԿԱ ԴԱԿ
6.	Աշխատանք տանել դժվար դաստիարակվող աշակերտների հետ, կանխարգելել վարքի շեղումները	Տարվա ընթացքում	ՄԿԱ ԴԱԿ
7.	Սոցիալականմանկավարժի և հոգեբանի հետ համատեղ պարբերաբար կատարել դասալսումներ՝ ուշադրություն դարձնելով աշակերտի վարքի կուլտուրային	Տարվա ընթացքում	ՄԿԱ ԴԱԿ Սոց. Ման. հոգեբան
8.	Համագործակցել դպրոցի բուժքրոջ հետ աշակերտների ֆիզիկական և առողջական վիճակը ուսումնասիրելու նպատակով, նրա հետ միասին աշակերտների հետ անցկացնել զրույցներ, փորձել զարգացնել արտակարգ իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու կարողություններ և հմտություններ	Տարվա ընթացքում	ՄԿԱ ԴԱԿ Բուժքույր
9.	Ապահովել կրթության առանձահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների մասնակցությունը համադպրոցական միջոցառումներին	Տարվա ընթացքում	ՄԿԱ ԴԱԿ
10.	Աշխատանք տանել հաճախակի բացակայող և դասերին ուշ ներկայացող աշակերտների ծնողների հետ	Տարվա ընթացքում	ՄԿԱ ԴԱԿ

ԸՆՏԱՆԻՔ- ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Դաստիարակությունը հաջողությամբ է ընթանում, եթե ընտանիքի հետ տարվող աշխատանքը և երեխայի դաստիարակությունը կատարվում է միաժամանակ: այսօրվա պայմաններում առանց ընտանիքի հետ ձևավորված համագործակցության առկայության հնարավոր չէ արդյունավետ կերպով կազմակերպել սովորողների հետ աշխատանքը:

Արդյունավետ դարձնել ընտանիք-դպրոց փոխազդեցության համակարգը.

Բարձրացնել փոխադարձ վստահության մակարդակը

Բարձրացնել աշակերտների ուսուցման արդյունքների համար ծնողների

պատասխանատվությունը

Ծնողներին ավելի ակտիվորեն ներգրավել դպրոցի գործունեության մեջ

Նպաստել ծնողների և ուսուցիչների խմբային աշխատանքի արդյունավետությանը:

ԸՆՏԱՆԻՔ-ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է.

Ծնողների հոգեբանամանկավարժական տեղեկացվածության բարձրացում,

Ուսումնադաստիարակչական գործընթացներին ծնողների մասնակցության ընդլայնում,

Աշխատանք սոցիալապես անապահով ընտանիքի երեխաների հետ դասղեկ-դասվարների և աշակերտական խորհրդի հետ համատեղ մշակել ծրագիր՝սոցիալապես անապահով ընտանիքի երեխաներին օգնելու համար

Դպրոց-ընտանիք կապի ամրապնդում

Ծնողական համայնքի հետ կապը ամրապնդելու համար անցկացնել ծնողական ժողովներ: Կազմակերպել ծնող-ուսուցիչ հանդիպման օրեր, համատեղ արտադասարանական միջոցառումներ, անհատական զրույց ծնողների հետ՝բացատրելու ծնող-դպրոց կապի կարևորությունը: Զրույցի ընթացքում վերհանել աշակերտների մոտ առկա թերություններն ու վատ սովորությունները, ձեռնարկել միջոցառումներ թերությունները վերացնելու ուղղությամբ:

ԱՇԽԱՏԱՆՔ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ

1. Անցկացնել դպրոցի բոլոր աշակերտների դիտարկում, ճանաչել երեխային, գտնել ուժեղ կողմերը, ակտիվացման ուղիները և հատուկ կարիքները, ինչը հնարավորություն կտա օգնել երեխային ընդգրկվել աշակերտական կոլեկտիվ

2. Ուսումնասիրել երեխայի մտավոր զարգացման մակարդակին կրթական ծրագրի համապատասխանությունը

.Երեխայի հարաբերությունները այլ երեխայի հետ

.Երեխայի ծնողի հարաբերությունները այլ երեխայի ծնողների հետ

.Ծնողի հարաբերությունները մանկավարժների հետ

3.Անցկացնել զրույցներ, անհատական և խմբային աշխատանքներ, աշակերտների զարգացմանը նպաստող խաղեր, խաղային վարժություններ օրվա ռեժիմում, աշխատանքային և ուսումնական գործունեության ընթացքում:

4.Անցկացնել տեսողական ընկալման՝ նկարչական, գրելու, հաշվողական, կառուցողական, շարժումն ընդօրինակելու և պատկերն համադրելու կարողության ստուգման թեստեր:

5.Աշխատանքում օգտագործել համակարգչային և դիտակտիկ խաղեր, կինո ու տեսաֆիլմերի դիտում, վարժություններ, դասընթացներ:

6.Տարեվերջում կատարել անցկացված աշխատանքների և կրթության արդյունավետության գնահատում:

Կրթության առանձահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների կրթություն ստանալու իրավունքին նպաստող միջոցառումներ

ԿԱՊԿ ունեցող աշակերտներին ընդգրկել դպրոցում կազմակերպվող բոլոր միջոցառումներին և Ա/Խ –ի կազմում:

Նպատակը՝

Երեխաները պետք է համոզվեն, որ իրենք մեր հասարակության լիարժեք անդամ են և կարող են ավելին անել:

ԿԱՊԿ ունեցող աշակերտներին ընդգրկել դպրոցի բարեկարգման և մնացած բոլոր աշխատանքներին:

Նպատակը՝

Նրանց մեջ ձևավորել վստահություն իրենց ուժերի նկատմամբ:

Ն. Վարթխաթունյանը ունի թեթև հենաշարժային խնդիր, դասղեկի հետ օգնել օգտվել ճաշարանից:

Մ. Գուրգենը ունի անկանխատեսելի վարք, զրույցի միջոցով՝ օգտագործելով խրախուսման մեթոդը, փորձել հասկանալ նմանատիպ վարքի դրսևորման պատճառները: Համագործակցային աշխատանքում ձևավորել հանդուրժող վարքագիծ :

Պարբերաբար օգնել Ա. Գասպարյանին, կատարել տնային աշխատանքները :

Աշակերտական խորհուրդ

2022-2023ուստարի

№	Աշխատանքիբովանդակությունը	ժամկետը	Կատարողանձ	Նշումներ
1	Սովորողների առաջին ընդհանուր ժողով	1-10/09	Տնօրեն ՄԿԱ ԴԱԿ	
2.	Ընտրական հանձնախմբի ձևավորում Ա/Խ-ի կազմում չընդգրկված մեկական աշակերտ	10-12/09	Տնօրեն ՄԿԱ ԴԱԿ	
3.	Դասարանական խորհուրդների ընտրություններ, որոնց հիման վրա տասնօրյա ժամկեղում ձևավորվում է Ա/Խ-ը	12-15/09	ՄԿԱ ԴԱԿ	
4.	Աշակերտական խորհրդի ընտրություններ	15-20/09	ՄԿԱ ԴԱԿ	
5.	Աշակերտական խորհրդի նախագահի ընտրություններ	01-05/10	ՄԿԱ ԴԱԿ	
6.	Աշխատանքային հանձնախմբի ձևավորում	01-10/11	ՄԿԱ ԴԱԿ	

Աջակցել Ա/Խ- ի ԵՎ նախագահի ամենամսյա ծրագրերին

Ազատանի միջնակարգ դպրոցի համադպրոցական միջոցառումների պլան

2022-2023 ուստարի

№	Աշխատանքի բովանդակությունը	Պատասխանատու	Կատարման ժամկետը	նշումներ
1.	Միջոցառում՝ նվիրված գիտելիքի օրվան << Առաջին զանգ>>	Փոխտնօրեններ, ԴԱԿ դասղեկներ	01.09.2017թ.	Կատարված է
2.	Դասարաններում ընթերցել դպրոցի կանոնադրությունը, երեխայի իրավունքներն ու պարտականությունները	ՄԿԱ փոխտնօրեն, ԴԱԿ Դասղեկներ	Սեպտեմբեր 4-8	
3.	Բանավեճ- քննարկում <<Անկախությունն իմ աչքերով>>	ՄԿԱ փոխտնօրեն, ԴԱԿ	Սեպտեմբերի 21	
4.	Ցածր դասարաններում կազմակերպել <<Ճանաչենք մեր բնության հրաշքները >> թեմայով նկարչական աշխատանքների ցուցահանդես:	ՄԿԱ փոխտնօրեն ԴԱԿ Դասվարներ	հոկտեմբեր	
5.	Ուսուցչի օրվան նվիրված պաստառի պատրաստում բոլոր դասարանների ավագների միջոցով և անակնկալ Ա/Խ –ի կողմից	ՄԿԱ փոխտնօրեն, ԴԱԿ Ա/Խ	Հոկտեմբեր 5	
6.	Բերքի տոն	ՄԿԱ փոխտնօրեն ԴԱԿ, երգ-երաժշտության ուսուցիչ	Նոյեմբեր	
7.	Ամանորին նվիրված միջոցառումներ: Դպրոցի ձևավորում Ա/Խ-ի կողմից	ՄԿԱ փոխտնօրեն, ԴԱԿ Ա/Խ Դասվար-դասղեկներ	Դեկտեմբեր 20-23	

8.	Զեկույց՝ Շնորհավոր տոնդ, Հայո՛ց բանակ	ՄԿԱ փոխտնօրեն, ԴԱԿ	Հունվար 26	
9.	Կազմակերպել շաբաթօրյակներ, բարեկարգման աշխատանքներ	ՄԿԱ փոխտնօրեն, ԴԱԿ դասղեկներ	մարտ	
10.	<< **Գարունն իմ աչքերով** >> լուսանկարչական մրցույթ:	ՄԿԱ փոխտնօրեն ԴԱԿ Դասղեկներ	մարտ	
11.	Երգի և ասմունքի մրցույթ՝նվիրված գարնանը և մարտի 8-ին	ՄԿԱ փոխտնօրեն ԴԱկ	մարտ	
12.	Թատրոնի միջազգային օր, հանդիպում անվանի դերասանների հետ	ՄԿԱ փոխտնօրեն ԴԱԿ, դասղեկներ	Մարտի 27.	
13.	<<Հայ մեծանուն գրողներ>> Հովհաննես Շիրազ , Պարույր Սևակ. . .	ՄԿԱ փոխտնօրեն, ԴԱԿ	Ապրիլ27	
14.	Կլոր սեղան՝ **Ընտանիքի միջազգային օր** **<<ԸՆՏԱՆԻՔԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՇՔ>>**	ՄԿԱ փոխտնօրեն ՄԿԿ Ա/Խ	Մայիս 15	
15.	Թանգարանների միջազգային օր	ՄԿԱ փոխտնօրեն ԴԱԿ դասղեկներ	Մայիսի 18	
16.	***Շոու ծրագիր*** ***<<Ուռա՜,արձակուրդներ են>>*** Գովասանագրերի հանձնում:	ՄԿԱ փոխտնօրեն ԴԱԿ,դասղեկներ, Դասվարներ	Հունիսի 1	